Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

03.10.2018թ *ք. Սևան*

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնի հարկադիր կատարող, արդարադատության կապիտան՝ Գառնիկ Փանոսյանս ուսումնասիրելով 06.04.2018թ. հարուցված թիվ 00220636 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 15.04.2014թ-ին տրված թիվ ԳԴ4/0034/02/14 կատարողական թերթի համաձայն պետք է Արմեն Ազատի Հովհաննիսյանից հօգուտ Տաթևիկ Արամայիսի Ավետիսյանի,որպես վերջիններիս համատեղ կյանքից ծնված երեխաներ՝ Ազատ Արմենի Հովհաննիսյանի /ծնված 11.11.2003թ./ և Մարիամ Արմենի Հովհաննիսյանի /ծնված 15.05.2007թ./ բռնագանձել ալիմենտ՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 20000 ՀՀ դրամի չափով՝ մինչև վերջիններիս չափահաս դառնալը՝ բռնագանձումը կատարելով 21.01.2014թ-ից:

06.04.2018թ-ին Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի մարզային բաժին մուտք է եղել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 17.03.2018թ-ին տրված թիվ ԳԴ4/0518/02/16 կատարողական թերթը, համաձայն որի պետք է հրապարակային սակարկությունների միջոցով վաճառել ք.Սևան, Գագարինավան, Թումանյան 6ա/16 հասցեում գտնվող բնակարանը՝ ստացված գումարը հետագայում բաշխելով սեփականության մասնակիցների միջև նրանց բաժիններին համաչափ:

Արմեն Ազատի Հովհաննիսյանից հօգուտ Տաթևիկ Արամայիսի Ավետիսյանի բռնագանձել 4000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար և 25000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների» մասին ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան՝ Արմեն Ազատի Հովհաննիսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք. Սևան, Գագարինավան, Թումանյան 6ա/16 հասցեի ներքոհիշյալ գույքը՝

/h	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	հ/կ ս ահմանված մեկնարկային գինը	գույքի քանակը
1	*Բնակարան, ք.Սևան, Գագարին, Թումանյան 6ա/16 հասցեում, 1 սենյակ ճևափոխված 2 սենյակի /սեփականության իրավունքի վկայականի համար 2396470/*	*3100000 ՀՀ դրամ*	*2325000 ՀՀ դրամ*	*1-հատ*

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 21.11.2018թ.:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում;

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրնքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:*

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում:Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջեցվում:Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6–րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով:Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստով փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ ստորագրություն Գ.ՓԱՆՈՍՅԱՆ ազգանուն